

ՏԵՂԵԿԱՆՔ ԿՈՐԻԻՆ ԱԲՂ. ԲԱՂԴԱՍԱՐԵԱՆԻ

ԴՐԱԽՍԱՅԻՆ ԱԿՆԱՐԿ

«Դրախոսային ակնարկ» յախճապակիէ որմնանկարը, նկարուել է Տիկ. Մարի Պալեանի կողմէ, որի վրայ Տիկ. Պալեանը աշխատած է վերջին 40 տարիներու ընթացքին: Որմնանկարը նուիրուեց Երուսաղէմ քաղաքին եւ տեղադրուեց Բորեշ փողոցի Դուրեանաշէն կառոյցի արտաքին ճակատի վրայ: Այն իր չափերով մեծածաւալ մի աշխատութիւն է (4 մ. լայնութիւն, 6 մ. երկարութիւն) եւ նկարուած է 1000 յախճապակիէ սալիկներու վրայ: Որմնանկարը պահանջել է բժախնդիր նկարչութեան վարպետութիւն, ինչպէս նաեւ տեսիլք ու հնարագիտութիւն: Եւրաքանչիւր սալիկ նախագծուել է ապա նկարուել է Տիկ. Պալեանի կողմէ վերջինիս ընտանեկան արհեստանոցում՝ դժուար պայմաններում, առանց ռեալ կողմնակի օգնութեան: Երուսաղէմի բնակիչներուն գեղեցկութեան աշխատանք մը նուիրելու իր բաղձանքն է, որ օգնած է իրեն յաղթահարելու բոլոր դժուարութիւնները: Յախճապակու իւրաքանչիւր սալիկը նախագծուելուց եւ նկարուելուց յետոյ վառարանում թրծուել է եւ ապա տեղադրուել իր տեղը՝ կապուելով դրախոսային մի ամբողջութիւն:

«Դրախոսային ակնարկ» որմնանկարի բացման արարողութիւնը տեղի ունեցաւ 2004 թուականի Նոյեմբերի 29-ին, որին ներկայ էին Պատրիարք Սրբապան Հօր հեռ՝ Լուսարարապետ Նուրիան Արք. Մանուկեան, Սեան Եպս. Ղարիպեան, Երուսաղէմի քաղաքապետ Յուրի Լուփալիանսկին, Բարալէի Զբօսաշրջութեան Նախարար Գեղեոն Եպրան եւ ուրիշ բարձրաստիճան պետական անձեր եւ հիւրեր: Բացման արարողութեանը շնորհատորական խօսքով հանդէս եկաւ Պատրիարք Սրբապան Հայրը: Իր խօսքում նա մասնաւորապէս նշեց. «Նայելով այս որմնանկարին, փորձում եմ արագ հայեացք ձգել դրախոսի վրայ, մինչ ասորում եմ երկրում: Փորձում եմ հետեւել եւ երեսան հանել դրախոսային կեանքի մանրամասները, որ նկարապարտուած են այս որմնանկարում:

«Անշուշտ անհնար է այն ամբողջութեամբ ընկալել, սակայն որմնանկարի պատգամը շատ յստակ է եւ ընկալելի, եւ այդ պատգամը հետեւեալն է. Աստուծո տիեպէրքում բոլոր արարածներու համար հնարաւոր է իրականացնել իրենց ճակատագիրը, ներդաշնակօրէն բաժանելով եւ վայելելով գեղեցիկի, ուրախութեան, յոյսի եւ իրագործման օրինութիւնները, ուրախ եւ խաղաղ համակեցութեամբ:

«Պալեան ընտանիքը, 1915 թուականի սոսկալի եղեռնի վերապրողներէն են, որոնք 1918-ին Յովհաննէսեան եւ Գարագաշեան ընտանիքներու հետ, հաստատում են Երուսաղէմում, հրաւիրուած լինելով վերանորոգելու “Dome of the Rock” մկիթի որմնանկարները: Երուսաղէմում հաստատուելով, փաստօրէն նրանք հանդիսանում են նաեւ յախճապակու արհեստը այս երկիր ներմուծողները:

Ինչպէս աղոյն նշեցինք որմնանկարում պատկերուած է դրախոսը, որտեղ երկիրն ու ծովը միախառնուած են: Այն ներկայացնում է տիեպէրային, հովերգական համայնապատկեր, որն առընչութիւն չունի իրեն շրջապատող հնչուն իրականութեան հետ: Երկիրն ու ծովը միացնող տրամագիծը հատում անցնում է ամբողջ որմնանկարը, շրջանակուած երկու սահմանագծող ծառերու պատկերներով. արմաւենի եւ նոճի, կիտրոնի եւ նռան ծառերով, ծաղիկներով եւ այլ բոյսերով հանդերձ: Պատկերում վիթերը շրջում են մարգագետնում եւ թռչունները բոյն են հիւսում ծառերու վրայ: Որմնանկարի ներքնամասում

երկու սիրամարզեր են պատկերում ամառային ամառային ամառային, իսկ երրորդ սիրամարզի պոչը ծառայում է իբրև կիպակետ որմնանկարի համար: Ծովում, երկու հին նաւակներու կողքին թռչող ձկներ կան:

Որմնանկարչութեան մէջ նոճու եւ արմառի ծառերը աւանդաբար ներկայացում են իբրև կեանքի եւ յախոնեակամութեան խորհրդանիշներ: Տիկ. Պաղեանը իր կերպարներով կերտած է մի համադրութիւն մնայուն շարժման մէջ, որմնանկարում պատկերում ամառայիններու օգնութեամբ:

ԲԵՍԱԼ ԵԱԼՉԸՆԻ ԱՅՅԸ ԵՐՈՒՄԱՂԵՄ

Դեկտեմբերի 25-ից 30-ը (2004 թ.) Երուսաղէմի Հայ Ռամկավար Ապատական Կուսակցութեան հրատարակած Երուսաղէմ այցելեց թուրք գրող եւ գրականագէտ Բեմալ Եալչընը: Բեմալ Եալչընին կ'ընկերակցէր Գերմանիոյ առաջնորդ Գերշ. Գարեգին Արք. Բեքչեանը:

Ժամանան առաջին իսկ օրը հիւրերը հիւրընկալուեցին Հայոց Պատրիարքարանի մէջ Պատրիարք Սիրապան Հօր կողմէ: Հանդիպման աւարտին Բաղչաթաղի վարդապետաց սեղանատան մէջ միաբանական ճաշկերոյթ տրուեց ի պատիւ հիւրերի, որին ներկայ էին միաբան Հայրեր եւ Երուսաղէմի Ռամկավար Ապատական Կուսակցութեան վարչութեան անդամներ:

Դեկտեմբերի 26-ին Ժառանգաւորաց Վարժարանի սրահի մէջ տեղի ունեցաւ Բեմալ Եալչընի դասախօսութիւնը: Բացման իօսքը եւ Բեմալ Եալչընի ինքնակենսագրութիւնը ներկայացուց Յակոբ Անդրէասեանը: Բեմալ Եալչընը ներկայացուց Հայոց Մեծ Եղեռնի վերաբերեալ իր գրած երկու՝ «Հոգիս Բեպնով Կը Խալոյայ» եւ «Մարի Հարսը» գրքերը, ինչպէս նաեւ դրանք գրելու շարժառիթները, իսկ բանախօսութեան վերջում ամբողջ թուրք ազգի անունից ներողութիւն խնդրեց Հայ ժողովրդից՝ կարդալով իր գրքի յառաջաբանի հետեւեալ հատուածը.

«Միտէի Հայ եղբայրներս,

Մեր հարիւրամեակի մեծագոյն ցաւը, մարդկութեան ճակտին սեւ մուրը եղող ջարդերուն, «արքայի ընթացքին ծրագրուած կերպով սպաննուած», կեանքը կորսնցուցած բոլոր Հայերու եւ Ասորիներու յիշատակին առջեւ կը խոնարհիմ, ձեր ցաւերը կ'ընդունիմ որպէս իմ ցաւերը: Որպէս թուրք գրագէտ, իմ անունով ձեպնէ եւ մարդկութենէ ներողութիւն կը խնդրեմ»:

Բանախօսութիւնը հայերէնի կը թարգմանէր Գարեգին Արք. Բեքչեանը, որն, ի դէպ, հայերէնի թարգմանած եւ հրատարակած է «Հոգիս Բեպնով Կը Խալոյայ» գիրքը, իսկ «Մարի Հարսը» գիրքը եւս պիտի թարգմանուի:

Բանախօսութեան աւարտին, Բեմալ Եալչընը նաեւ առիթ ունեցաւ պրոցելու բանախօսութեան մասնակիցներու հետ, ինչպէս նաեւ մակագրելու «Հոգիս Բեպնով Կը Խալոյայ» գիրքը, որն այս առթիւ վերահրատարակուած էր եւ կը վաճառուէր:

Դեկտեմբեր 27-ին մէկ օրով Բեմալ Եալչընը ընկերակցութեամբ Գարեգին Արք. Բեքչեանի, Երուսաղէմից ուղեւորուեց Յորդանանի մայրաքաղաք Ամման, ուր բանախօսեց իր երկու գրքերի մասին:

Դեկտեմբեր 28-ին Բեմալ Եալչընը հիւրընկալուեց Պր. Յակոբ Ծօհմէլեանի կողմէ Բեթղեհէմի իր բնակարանում: Նոյն օրը Բեմալ Եալչընը նաեւ այցելեց Բեթղեհէմի Ծմնդեան Տաճար եւ Տաճարին յարակից Հայոց վանքը:

Դեկտեմբեր 29-ին, ի պատիւ հիւրերի, Երուսաղէմի “Christmas” հիւրանոցում հիւրասիրության տրուեց, որուն իրենց մասնակցութիւնը բերին Պատրիարք Սրբապան Հայրը, Հ. Հ. Պատույ Հիւպատոս Յօլակ Մոնճեանը, եւ հայ ազգայիններ:

Մասնակիցները իրենց սրտի խօսքն ու երախտագիտութիւնը յայտնեցին Բեանալ Եպաշընին իր այդքան խիպախ եւ շնորհապարտ գործի համար եւ յոյս յայտնեցին, որ ապագային ուրիշ թուրք մտաւորականներ եւս իր օրինակին հետեւելու քաջութիւնը կ'ունենան եւ իր օրինակին հետեւելով՝ արդարութիւնը եւ իրականութիւնը կը սատուցեն թուրք ժողովրդին եւ աշխարհին ու կամուրջ կը հանդիսանան հայ եւ թուրք ժողովուրդներու բարեկամութեան եւ հաշտութեան:

Դեկտեմբերի 30-ին հիւրերը վերադարձան Գերմանիա՝ իրենց հետ տանելով Սուրբ Երկրից ստացած աննոռանալի յուշեր եւ տպաւորութիւններ:

ԺԱՌԱՆԳԱՒՈՐԱՅ ՎԱՐԺԱՐԱՆԻ ԱՄԱՆՈՐԵԱՅ ՀԱՆԴԷՍ

2005 թուականի Յունուարի 13-ին, տեղի ունեցաւ Ժառանգաւորաց Վարժարանի Ամանորի հանդէսը:

Պատրիարք Սրբապան Հօր եւ Միաբան Հայրերու հանդիսաւոր մուտքէն վերջ ժառանգաւոր սաներ երգեցին Հայաստանի Հանրապետութեան հիմնը եւ Ժառանգաւորաց Վարժարանի քայլերգը, որուն յաջորդեց Վարժարանի Տեսուչ Պարէտ Ծ. Վրդ. Երեցեանի բացման խօսքը: Այնուհետեւ սաները հանդէս եկան ամանորեան ուրախ եւ փուարթ երգերով, իսկ մի քանիսը՝ յաջող կերպով դասական կտորներ կատարեցին դաշնամուրի վրայ:

Ուրաղակիր սաներէն Նարեկ Մկրտչեանը ընթերցեց ամանորեայ ողերձը, որմէ վերջ ժամանեց Կաղանդ պատիկը, որն իր ամանորեայ բարեմաղթանքները յայտնեց Պատրիարք Սրբապան Հօրը, Միաբան Հայրերուն եւ բոլոր ներկայներուն: Յայտագրի վերջին համարը անակնկալ է Պատրիարք Սրբապան Հօր համար. Հայաստանէն նոր ժամանած աշակերտներէն Նուէր Բալասեանը բնատուր տաղանդով եւ հրաշալի կերպով ասնունքեց Սրբապան Հօր գրչէն ելած «Կեանքիս Օրերն» բանաստեղծութիւնը:

Ապա Պատրիարք Սրբապանը իր փակման խօսքում մասնաւորապէս շեշտեց. «Ուրախ ենք, որ այս տարի հնարաւոր եղաւ Հայաստանէն նոր աշակերտներու ժամանումը, որոնց հետ նաեւ ժամանեցին նոր ուսուցիչներ, եւ ասիկա պատեհ առիթ է, որ աշակերտները օգտուին իրենց նոր ուսուցիչներէն, օգտուին առաւելագոյնս, նոյնիսկ պահանջեն աւելին, քան ուսուցիչները կու տան, ու երբ այդպէս վարուէք եւ աւելի քան սովորէք այս տարուայ ընթացքին, ապա այդ դէպքում միայն 2005 թուականը յաջող եւ բեղմնաւոր տարի եղած կ'ըլլայ մեր դպրոցի եւ ձեր՝ աշակերտներուդ համար»:

Հանդէսը աւարտուեց Սուրբ Աթոռոյս օրհներգի եւ «Հայր Մեր»-ի կրգեցողութեամբ ու Պատրիարք Սրբապանի «Պահպանփչով»:

Ամանորեայ տօնախմբութիւնները շարունակուեցան նաեւ կէսգիշերին: Աւանդութեան համաձայն՝ Երուսաղէմի հայ գաղութը իր Ամանորը կը սկսէ Վանքի մեծ բակին մէջ, ուր ժամը 00-ին Ամանորը ապրարարող Սբ. Յակոբի փանգակներու դողանջներու ներքոյ Ժառանգաւոր սաները կ'երգեն «Փառք ի Բարձունս» օրհներգութիւնը, որին կը յաջորդէ նաեւ ամանորեայ խօսքն ու բարեմաղթանքները:

Ի դէպ՝ միայն Երուսաղէմի փոքրաթիւ հայ գաղութն է, որ Ամանորը կը տօնէ Յունուար 14-ին, քանի որ Երուսաղէմի մէջ եկեղեցական տօները կը տօնուին հին տոմարով, այսինքն՝ նոր տոմարի համեմատ տասներեք օր տարբերութեամբ (աւելի ուշ):

ԽԱԽԱՍԱՊԵՏ ԻՈՆԱ ՄԵՅԳԵՐԻ ԱՅՅԸ ՀԱՅՈՅ ՊԱՏՐԻԱՐԹԱՐԱՆ

2005 թուականի Յունուարի 24-ին Երուսաղէմի Հին քաղաքի Հայոց Պատրիարքարանում տեղի ունեցաւ հանդիպում՝ Երուսաղէմի Հայ Պատրիարք Թորգոմ Արք. Մանուկեանի եւ Խախանապետ Իոնա Մեցգերի միջեւ:

Խախանապետին եւ նրան ընկերակցող հիւրերին Վանքի աւագ դռան մօտ նախ դիմաորեցին Պատրիարքարանի Էքումնիկ եւ Արուսբին Յարաբերութիւններու վարիչ Արիս Եպս. Շիրվանեանը եւ Աւագ Թարգման Գուսան Վրդ. Ալճանեանը: Այնուհետեւ հիւրերը դաւապների ուղեկցութեամբ առաջնորդուեցին Պատրիարքարան: Պատրիարքարանի մեծ դահլիճում հիւրերին դիմաորեցին Պատրիարք Սրբապան Հայրը եւ Լուսարարապետ Սրբապան՝ Նուրիան Արք. Մանուկեանը:

Ապա Պատրիարք Սրբապանը իր ողջոյնի խօսքում մասնաւորապէս շեշտեց կրօնների միջեւ փոխադարձ յարգանքի կարեւորութիւնը, ինչն էլ հնարաւոր է դարձնում տարբեր կրօնների հետեւորդների խաղաղ եւ ներդաշնակ համակեցութիւնը:

Պատրիարք Սրբապանը հանդիպումը որակեց պատմական եւ յոյս յայտնեց, որ այն կ'ունենայ շարունակութիւն:

Իր պատասխան ողջոյնի խօսքում Խախանապետ Իոնա Մեցգերը նախ շնորհակալութիւն յայտնեց Պատրիարք Սրբապանին ջերմ ընդունելութեան համար եւ իր խօսքում նշեց. «Շատ եմ փափաքում կոչ ուղղել իմ հրեայ եղբայրներին, որ յարգեն բոլոր մարդկանց, եւ ինչպէս մենք չենք ուրում, որ աշխարհում մեզ խանգարեն եւ խոչընդոտ յարուցեն Աստուծոյ մեր պաշտամունքի մէջ, այնպէս էլ մեզ է արգելուած ռեւէ բռնութիւն կամ անարգական վերաբերմունք դրսեւորել մեր երկրի մէջ գործող տարբեր կրօնների, մասնաւորապէս քրիստոնէական կրօնի, Բրիտանեանների եւ կրօնականների նկատմամբ: Նման որեւէ արարք արժանի է դատապարտման»:

Հանդիպումը տեւեց աւելի քան 45 րոպէ: Հանդիպման աւարտին երկու կրօնապետները փոխանակեցին նուէրներ՝ ի նշան սիրոյ եւ համագործակցութեան: Նշենք, որ այս հանդիպումը տեղի ունեցաւ հայ հոգեւորականների վրայ հրեայ երիտասարդ կրօնականների կողմից իրականացուած յարձակումների եւ քրիստոնէութեան խորհրդանիշ եղող խաչի վրայ թրեղուց յետոյ:

Հանդիպմանը անդրադարձան Իսրայէլի «Մաարիվ» եւ «Հաարեց» օրաթերթերը: «Հաարեց» թերթի հաղորդած տեղեկութեան համաձայն, նախքան հանդիպումը, Երուսաղէմում հրեայ երիտասարդ ծայրաէջականների կողմից թրուցիկներ են տարածուել, որոնցում Խախանապետը մեղադրում է Բրիտանեանները աջակցելու գործում:

ՈՒՒՍԱԳՆԱՅՈՒԹԻԻՆ ԴԵՊԻ ՅՈՐԴԱՆԱՆ ԳԵՏ

Ուխտագնացութիւնը ուխտի մի ձեւ է, որը կնքում է հաւատացեալի եւ Աստուծոյ միջեւ: Ուխտագնացութիւնը առաջին դարի քրիստոնէաններից մեզ

հասած ամանդություն է: Բրիտանացիները հեթանոսների հալածանքներից խոյս տալու համար, գաղտնաբար այցելում էին Սուրբ Երկիր և հոգեպես հաղորդում Բրիտանի կեանքի հետ կապ ունեցող սրբություններին և պրավապրիին: Բրիտանացիների վաղ ժամանակներից մեկ հասած այս ամանդությանը հետեւելով՝ Երուսաղեմի Միաբանությունը ամեն տարի Ծննդեան և Աստուածայանության օրերից յետոյ ուխտագնացության էր մեկնում Յորդանան գետ, ուր կատարում էր Ջրօրհնեաց հոգեպարար արարողությունը: Սակայն վերջին մի քանի տասնամյակներին, քաղաքական աննպաստ պայմաններու պատճառով ուխտագնացության այդ ամանդությունը դադարել էր, և միայն այս տարի, 2005 թուականի Յունուարի 30-ին մեծ թուով ուխտադներու մասնակցությամբ տեղի ունեցաւ ուխտագնացություն:

Համեմատելով այն վարը, ուր ամանդության համաձայն մկրտուել է մեր Տէր Յիսուս Բրիտանը՝ Յովհաննէս Մկրտչի կողմէ, որն այժմ պինուրական արգելեալ գօտի է և միայն յատուկ պրոտոկոլային կարելի է մուտք գործել, նախ կատարուեց Արցախեան պատանադոսիկների հոգեհանգստեան արարողություն և ապա տեղի ունեցաւ Ջրօրհնեաց արարողությունը, որի ընթացքին սուրբ Միռոնը «Առաքելոյ աղանոյ» շարականի երգեցողության տակ միւռնուպատեց Յորդանան գետ, որից յետոյ բոլոր ուխտադները յուացուեցին միւռնուսած գետի ջրով, ինչպէս նաեւ վերցրեցին իրենց հետ գետի միւռնուսած ջրից՝ հաւատալով դրա սրբաբար և հրաշագործ զօրութեանը:

Արարողության աւարտին Միաբանությունը ուղեւորուեց Երիքովի Ռուսինական կիսակառոյց եկեղեցին և դիմաւորուեց Վանահօր կողմէ, աղով և հացով: Վանահայրը նախ տուեց հակիրճ բացատրություն ընդհանուր վանքի և վանական համայնքի շինարարական և հետագայ ծրագրերի մասին: Փոքրիկ հիւրասիրութիւնից յետոյ Միաբանությունը ուղեւորուեց Երիքովի ճաշարաններից մեկում ճաշելու և մի քանի ժամ հաճելի ժամանակ անցկացնելուց յետոյ վերադարձաւ Երուսաղեմ:

ԱՐՅԱԽԵԱՆ ԱԶԱՏԱՄԱՐՏԻ 17-ԸՆ ԱՄԵԱԿ

Արցախեան շարժումը նախկին Խորհրդային Միութիւնում կայացած առաջին ընդվզումն էր յանուն պատանության և արդարութեան: 1988 թուականի Փետրուար ամսին Լեռնային Ղարաբաղի ժողովուրդը պաշտօնապէս դիմել էր Խորհրդային Կառավարութիւն, բռնապետ Իոսիֆ Ստալինի պարտադրած պատմական անարդարութիւնը ուղղելու և այդ տարածաշրջանը Խորհրդային Հայաստանին վերամիաւորելու խնդրանքով: Այս խաղաղ և օրինաւոր խնդրանքին Խորհրդային և Ադրբեջանական կառավարութիւնները շատ խիստ հակապրեցին և այդ հակապրեցողութիւնը վերանեց Ղարաբաղի դէմ ռաբնական նախապարձակման:

Սակայն Լեռնային Ղարաբաղի ժողովուրդը արիաբար պաշտպանեց իր նախահայրերի հողում պատ ապրելու իրաւունքը: Ապա ապրելու դարաբաղցիների ձգտումը առաջնորդեց նրանց, և 1991 թուականի Սեպտեմբեր 2-ին Լեռնային Ղարաբաղը հռչակեց իր անկախութիւնը: Նոյն թուականի Դեկտեմբեր ամսին 10-ին կայացաւ անկախութեան հանրաքուէ:

Վեց տարուայ դաժան և արիւնալի մարտերից յետոյ Լեռնային Ղարաբաղի արիասիրտ և կորովի ժողովրդի հայ մարտիկների կատարած սիրանքները ու պատերազմում շահած յաղթանակը տոխպեցին Ադրբեջանին, որ նա 1994 թուականին պինադադարի պայմանագիր կնքի Լեռնային

Ղարաբաղի հետ: Լեռնային Ղարաբաղի յաղթանակը հրաշալի օրինակ է այն բանի, որ մեզ համար կենսականօրէն կարեւոր հարցերում հայ ժողովուրդը կարող է լինել համախմբուած եւ յիրախ հրաշքներ գործել: Սակայն իրաքանչիւր յաղթանակ արեան գին է պահանջում: Լեռնային Ղարաբաղի յաղթանակը իրագործուեց աւելի քան 6000 հայ նահապետի մարտիկների արեան գնով, որոնք սակայն աննահացան եւ իրենց արեանք կերտեցին արցախեան ապստամարտի պատմութիւնը Ղարաբաղի ապստագրման պատերազմում: Նրանց յիշատակը միշտ անմար է մեր սրտերում:

Ամէն տարի Հայաստանեայց Առաքելական Եկեղեցին Հոգեհանգստեան արարողութիւն է կատարում ի հանգիստ ապստամարտիկների հոգիների: Երուսաղէմի Առաքելական Աթոռը այս տարի Հոգեհանգստեան արարողութիւն կատարեց Յորդանան գետի ափին՝ մեծ թով ուխտաւորների մասնակցութեամբ: Արարողութիւնը հանդիսապէտեց Պատրիարք Սրբապան Հայրը:

Բիւր խաղաղութիւն եւ ինկարկութիւն նրանց անմոռաց յիշատակին:

ՀԱՅԿԱԿԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՄԻՈՒԹԵԱՆ ՆԱԽԱԳԱՀ ՊՐ. ՊԵՐՃ ՍԵՒՐԱԿԵԱՆԻ ԱՅՅԸ ԵՐՈՒՍԱՂԷՄ

Երուսաղէմի իր այցելութեան ընթացքին՝ Փետրուար 4-ին, Հայ Բարեգործական Ընդհանուր Միութեան նախագահ Պր. Պերճ Սեդրակեանը հանդիպում ունեցաւ Երուսաղէմի Առաքելական Սուրբ Աթոռի Պատրիարք Թորգոմ Արք. Մանուկեանի հետ: Հանդիպման ընթացքին քննարկուեցան Երուսաղէմի Սուրբ Աթոռին, ինչպէս նաեւ հայ գաղութին վերաբերող հարցեր:

Բաղշաթաղի վարդապետաց սեղանատան մէջ ի պատիւ Պր. Պերճ Սեդրակեանի միաբանական ճաշկերտյոջ կարմակերպուեցաւ, որի ընթացքին Պր. Սեդրակեանը իր խօսքում շեշտեց Պատրիարքարանի կարեւոր դերը հայ հոգեւոր, մշակութային եւ ազգային արժէքներու պահպանման եւ տարածման գործում, ինչպէս նաեւ պատասխանատու դերը հայ քրիստոնէական հաւատքի պատմական կեդրոն հանդիսացող Երուսաղէմի եւ Երուսաղէմում գոնուող արքայապետութեան պահպանման գործին մէջ: Նա նաեւ իր գոհունակութիւնը յայտնեց Պատրիարքարանի ստանձնած հայորդեաց կրթութիւն ճանրելու կարեւոր առաքելութեան համար, որը թէեւ ծախսատար է, սակայն Պատրիարքարանը մեծ գիտակցութեամբ կ'իրականացնէ թէ՛ գաղութի հայ պատկերներու հայեցի կրթութեան պարտաւորութիւնը, եւ թէ՛ Ժառանգաւորաց Վարժարանի մէջ տրուող հոգեւոր կրթութիւնը, ուր կը պատրաստուին Հայ Եկեղեցու ապագայ հոգեւոր սպասաւորներ, որոնք պէտք է ստանձնեն արքայապետեաց պաշտպանութեան պատասխանատուութիւնը, ինչպէս նաեւ ծառայեն աշխարհի տարբեր ծայրեր սփռուած հայութեանը՝ մատակարարելով անոնց հոգեւոր կարիքներուն:

Պր. Սեդրակեանը հանդիպում ունեցաւ նաեւ Կալուածոց Տեսուչ Բագրատ Արք. Պորճէքեանի հետ եւ ծանօթացաւ այդ բաժանմունքի առջեւ ծառայած դժուարութիւններուն:

Նոյն օրուայ երեկոյեան Պր. Սեդրակեանը եւ Պատրիարք Սրբապան Հայրը ընթրեցին Ժառանգաւորաց Վարժարանի սաներու եւ ուսուցչական անձնակազմի հետ: Պր. Սեդրակեանը ընթրիքի ընթացքին իր խօսքում նշեց. «Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնէն յետոյ, Երուսաղէմի Սուրբ Աթոռը ամենակարեւոր կրօնական կեդրոնն է, որն էլ կը հանդիսանայ մեր ինքնութեան